№ 54 Ապրիլի 2 (14) 1882 Ապրիլի 2 (14) № 54

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օգնիր քեզ ինքդ և Աստուած քեզ կօգնի։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Սարէլնիկովի սպանումը։ Նամակ Շամախուց։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Աւստրօ-Ունգարիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՕԳՆԻՐ ՔԵԶ ԻՆՔԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՔԵԶ ԿՕԳՆԻ

—

Մարդկութեան բոլոր ազգերը ունեն այդ իմաստուն առածը։ Միայն դժբաղդաբար այդ առածը շատ քիչ ազգերի մէջ և միայն քաղաքակիրթ ժողովրդների մէջ է կատարվում։ Իսկ մեծ մասամբ մարդկութիւնը սովոր է սպասել ամեն բան նախախնամութենից, առանց աշխատելու իրանից էլ մի բան անելու....

Այն ազգերը, մանաւանդ, որոնք երկար ժամանակ մահմեդական աշխարհի տիրապետութեան տակ են գտնվել, ընտելացել են անշարժութեան, անգործութեան։ Նրանք կորցրել են ինքնագործութեան, ինքնաօգնութեան ոգին։ Իսկ Աստուածը, նախախնամութիւնը, բնութիւնը օգնում են միայն այն մարդուն, որ ինքն էլ իրան օգնում է։

Մեր կովկասեան երկիրը քանի գնում է կորցնում է իր առաջվայ բարեխառն, գեղեցիկ կլիման։ դրա գլխաւոր պատճառն այն է, որ մենք անխնայ կոտորել ենք մեր երկրի մէջ բոլոր անտառները։ Անտառը բարեխառնում է եղանակը,—այդ յայտնի է թէ գիտութենից և թէ գործնական կեանքից։ Որտեղ անտառներ կան, այնտեղ կլիման լինում է բարեխառն, յաճախ անձրևներ են լինում, բայց նրանք հեղեղման չեն լինում, անտառոտ երկիրների ձմեռը լինում է մեղմ, իսկ ամառը հով, անտառով ծածկված երկիրներում խիստ քամիներ չեն լինում։ Ընդհակառակն, անտառներից զուրկ երկիրներում ձմեռը լինում է խիստ, ամառը անտանելի շոգ, անդադար լինում են խիստ, աւերիչ քամիներ, ջրերը նուազում են, յաճախ պատահում են չորային եղանակներ, իսկ երբ անձրևներ սկսում են գալ, նրան գալիս են հեղեղի նման, և իրանց սաստկութեամբ աւերում են երկիրը։

Քաղաքակիրթ երկիրներում չեն ոչնչացնում անտառները, այլ ընդհակառակն, աշխատում են պահպանել նրանց։ Իսկ որտեղ անտառները այս կամ այն պատճառով ոչնչացել են,—աշխատում են կրկին անկել ծառեր, նորոգել, զարգացնել անտառներ։

Ասիացին սովոր է ոչինչ չանել, ախ ու վախ քաշել, գանգատվել վիճակի վրա և ամեն բան սպասել նախախնամութենից։ Ասիացին մոռանում է մեր վերև յիշած իմաստուն առածը, թէ՝ օգնիր քեզ և Աստուած քեզ կօգնի։

Մենք ինքներս ոչնչացրինք մեր երկրի բոլոր անտառները, աներևակայելի ենք համարում նորից բուսցնել անտառներ, որտեղ նրանք այլ ևս չը կան,—և մի և նոյն ժամանակ ապարդիւն կերպով անդադար ախ ու վախ քաշելով, գանգատվում ենք թէ մեր երկրի կլիման տարուց տարի վատանում է, աւելի և աւելի անտանելի է դառնում։

Պարզ է որ կլիմայի վատանալու պատճառով երկրի բոլոր բերքերն էլ պակասել նուազել են, ուրեմն հետզհետէ սկսում է ամեն տեղ տիրել առաջին հարկաւորութեան միջոցների անասելի թանգութիւնը։ Եւ այդ բոլորը այն պատճառով որ մենք անխնայ կերպով ոչնչացրինք մեր երկրի ամբողջ երեսից մեր նահապետական հարուստ անտառները։

Ահա դա է ասիական քաղաքակրթութիւնը. սպառել, ոչնչացնել, զուրկ լինել ինքնաօգնութեան, ինքնագործութեան ամենապիտանի նշոյլից անգամ,—և մի և նոյն ժամանակ ախ ու վախ քաշել, գանգատվել վիճակի վրա և ամեն բան սպասել, ձեռները ծալած, երկնային ոյժից, նախախնամութենից։

Դարձեալ կրկնում ենք մարդկային բոլոր իմաստուն ազգերի անմահառածը. օգնիր քեզ ինքդ,—և Աստուած կօգնի քեզ։

Մենք պարզ տեսնում ենք որ Կովկասի և Անդրկովկասի կլիման, քանի կերթայ, տարուց տարի կը վատանայ և վերջը անտանելի կը դառնայ մեր երկիրների ազգաբնակութեան համար, մինչև որ մենք վերջապէս չը մոռանանք և հաստատապէս չը վճռենք ձեռք տալ մեր երկրի մէջ եղած անտառների պահպանութեանը և ամեն տեղ, որտեղ հնարաւոր է, նոր անտառների զարգացմանը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՏՐԷԼՆԻԿՈՎԻ ՍՊԱՆՈՒՄԸ

—

Գեներալ-մայոր Սարէլնիկովի սպանման մասին „Новор. Телегр." լրագիրը հաղորդում է հետևեալ։

Գեներալ Սարէլնիկովի սպանման մանրամասնութիւններից երևում է, որ երկու չարագործներն էլ եկել են Օդէսսա առանձնապէս գեներալ Սարէլնիկովին սպանելու նպատակով։ Նրանցից մէկը, գեներալ Սարէլնիկովին սպանողը, իջևանեց կենտրոնական հիւրանոցի մէջ, իսկ սպանման օրը դուրս եկաւ հիւրանոցից, յայտնելով, թէ ուղևորվում է Կիշինեւ, մինչդեռ ինքը ընակարան վարձեց Վէյնբերգի տանը, թողեց այնտեղ իր պահարանը և դուրս եկաւ սպանութիւն գործելու համար։ Մարդասպանի ընկերը ընակվում էր Կրիմսկայա հիւրանոցի մէջ, որտեղ իջել էր գեներալ Սարէլնիկով։ Մարդասպանը իր հետ ունէր երկու ըէվոլվեր և երկու դաշոյն։ Մի ըէվոլվերից միայն մի գնտակ է արձակված, իսկ դրանից կարելի է եզրակացնել, որ Սարէլնիկով մի հարուածով սպանվեցաւ։ Մարդասպանը, վաղելով Պրիմորսկայա բուլվարով, ուղևորվեցաւ դէպի կառքը, որ ձիավարում էր նրա համախոհը և որ նրան սպասում էր։ Երբ վերջինը տեսաւ, թէ ամբոխը կալանաւորեց մարդասպանին, թողեց կառքը և փախաւ դէպի Ցամաքեինայա հրապարակը։ Նա ունէր մի ըէվոլվեր և երկու դաշոյններ։ Նա երկու անգամ արձակեց ըէվոլվերը և վիրաւորեց Լաբզին ու Նէկրասով բանուորներին և յետոյ բռնվեցաւ մաքսային ասոյիճանաւոր Իգնատովիչից և պոլիցիական Գավրիլովից։ Այդ ժամանակ մարդասպանին էլ բերում էին բանուորները։ Գավրիլով հրամայեց կապել նրանց և հասցրեց պոլիցիական բաժինը։ Նրանցից մէկը 23 տարեկան երիտասարդ է հիւանդոտ դէմքով։ Մարդասպանը 21 տարեկան է։

Երևում է, որ յանցաւորներին վիճակված էր բռնվել։ Եթէ գեներալ Սարէլնիկով նստեր բուլվարի միւս կողմը նստարանի վրա, մարդասպանը և նրա համախոհը կարող էին փախչել իրանց կառքով և անհետանալ։

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Մարտի 13-ին

Վերջին ժամանակներս տեղւոյն դպրոցական հարցը սկսել է արդէն զրաղեցնել մեր հողագործաց և հասարակութեան ուշադրութիւնը և փորձեր են լինում այդ դպրոցներին մի կանոնաւոր տեսք ու կերպարանք տալու։ Բայց չը նայելով այդ բարի ցանկութիւններին, նրանք այնու ամենայնիւ չեն կարողանում հասնել այն բարձր նպատակներին, որոնց ձգտում է և պիտի ձգտէ ամեն մի դպրոց։ Աշակերտը, օրինակ, 4—5 տարի մնալով դպրոցում և մի վկայական էլ ստանալով այնուհետև կարում է բոլորովին իր յարաբերութիւնը այդ վերջինիս հետ։ Պարապելով մշտական անալին կամ փողոցային աշխատանքով, չունենալով միջոցներ, յարմար դէպքեր, բայց երբէմն և կարողութիւն պահպանել իր ստացածները կամ իմացածները, սովորութիւն չանելով իր ազատ ժամերը գրել ու կարդալ—նա, վաղ կամ ուշ, մոռանում է կրկին գրեթէ այն ամենը, ինչ որ նա ստացել է դպրոցում երկար տարիների ընթացքում։

Մտաւորական կողմից օրից օր թուլանալով, հաւասարվելով կամաց-կամաց անգրագէտ ամբոխի հետ, աշակերտը հետևաբար ստորանում է և բարոյական կողմից։ Վերին աստիճանի տխուր իրողութիւն։

Մենք մինչև հիմայ կարծել ենք թէ՝ աշակերտը իր դպրոցական ուսման կուրսը աւարտելուց յետոյ կարող է իր չրջապատող անգրագէտ ամբոխի վրա ազդել արդիւնաւոր կերպով, կամ ժամանակով—ֆիզիկապէս և բարոյապէս կաղդուրվելով—կարող է օգտաւէտ մարդ դառնալ թէ իրան, թէ ընտանիքի և թէ հասարակութեան համար։ Բայց տարաբաղդաբար մեր յոյսերը և մեր բոլոր ենթադրութիւնները մինչև այժմ չիրագործվեցան։ Այդ տեսակ յոյսերով ապրում են մեզնից շատերը դեռ մինչև այժմս էլ, բայց, ամենաազնիւ ձգտումները և նպատակները չեն իրագործվում։ Էլ այն ժամանակ մեր աղքատ և համեստ ուսուցիչը ինչով պիտի ապրէ. որ պատճառները նրան կը ստիպեն աւելի եռանդով աշխատելու. ինչը կը պահպանէ նորա էներգիան ամենադժուար դպրոցական աշխատանքի մէջ։ Մենք—տեղւոյն ուսուցչական խումբը—երկար ժամանակ սպասում էինք մի յենարանի, մի միջոցի, և ահա կանգ առինք այն մտքի վրա թէ՝ հարկաւոր է բանալ ձրիավարժ կիրակնօրեայ դպրոց գրագէտ և անգրագէտ արհեստաւոր աշակերտաց համար։ Այդ միտքը մենք երկար ժամանակ փայփայում էինք, դրան ևս համակրում էին ծնողները և այն աշակերտաց բարեկամները և վարպետները, որոնց վիճակով այդ վերջիններս հետաքրքրվում են, համակրական կերպով ողջունելով մեր ապագայ գործունէութեան նախագիծը և մինչև անգամ յայտնելով իրանց պատրաստակամութիւնը օգնել մեզ մեր օգտաւէտ ձեռնարկութեան մէջ։ Զարմանալի է, որ երեխայք անգամ կրկնում էին այդ միտքը իրանց ծնողաց և յայտնում իրանց կատարեալ ցանկութիւնը յաճախելու նոր բացվելի կիրակնօրեայ դպրոցը։ Վերջապէս, չնորհիւ տեղւոյն ուսուցչական խմբի և թեմական դպրոցի հոգաբարձուաց, նամանաւանդ նոյն դպրոցի ուսումնական բաժնի հոգաբարձու և էկս-մանկավարժ պ. Կանճաճեանցի եռանդուն գործունէութեան և նրա դպրոցական փորձառնութեանը, ներկայ թվի յունվար ամսում հանդիսաւոր եկեղեցական ծիսակատարութեամբ բացվեցաւ ձրիավարժ կիրակնօրեայ դպրոց գրագէտ և անգրագէտ արհեստաւոր աշակերտաց համար, որ և մինչև այժմս էլ շարունակում է իր գործունէութիւնը ամենայն ճշտութեամբ և եռանդով։ Դպրոցը բաղկացած է երկու բաժնից. առաջին բաժինը, ուր ուսանում են մինչև 25 աշակերտներ, նշանակված է բոլորովին անգրագէտ չափահաս կամ անչափահաս աշակերտաց համար. իսկ երկրորդ բաժինը, ուր ուսանում են 15 աշակերտներ—միմիայն նրանց համար, որոնք կամ դպրոցումն են սովորած, կամ տանը պատրաստված։ Դասախօսութիւնը լինում է ամեն կիրակի, առաւօտեան 10 ժամից մինչև $1^1/_2$ ժամը կէսօրից յետոյ. իւրաքանչիւր դասը տևում է 40 րոպէ, 30 րոպէ էլ նշանակված է դասամիջոցների համար։ Դպրոցի նպատակն է կրկնել անցածները, լրացնել և կատարելագործել իմացածները և միջոցներ տալ գրագէտ աշակերտաց զարգանալու ինքնակրթութեան մէջ. իսկ անգրագէտ աշակերտաց սովորեցնել կարդալ, գրել և հաշուել, նոյնպէս և ծանօթացնել կրօնի ամենատարրական ուսմունքների հետ՝ եկեղեցական տօների կարգ բացատրութեան ձևով. իսկ ազգային տօների բացատրութեան միջոցով անկասելի կերպով ծանօթացնել մայրենի պատմութեան ամենանշանաւոր անցքերի հետ։ Այն մեր կիրակնօրեայ դպրոցի համեստ ծրագիրը, որ չը նայելով իր սահմանափակ և համեստ լինելուն, ահագին օգուտներ կարող է տալ մեր անգրագէտ և գրագէտ դասակարգին, ահագին ծառայութիւն կարող է մատուցանել տեղիս ժողովրդի լուսաւորութեան գործին։ Եթէ այդ ծրագրով մենք շատ բան էլ չանենք մեր աշակերտաց օգտի համար, գոնեա յուսով ենք օգնել նրանց՝ օգտվելու այն քիչ բանով, որ տուել է նոցա դպրոցը մտաւորական ու բարոյական կողմից. յոյս ունենք բարձր պահպանել նրանց՝ իրանց չրջապատող անգրագէտ ամբոխից և արգելք դնել նրանց ենթարկվել վերջինիս ազդեցութեանը։ Գուցէ այդ մարդիկը իրանց յառաջադիմութեամբ մի մի լուսատու ճրագ պիտի դառնան խաւար միտքների մէջ։

Ի նկատի առնելով և այն, որ ծնողք ևս համակրանքով են նայում այդ օգտաւէտ ձեռնարկութեան վրա, կարելի է յուսալ, որ և նրանք ևս փոխանակ անմտաստակ թափառելու փողոցները և դաղարկ չրջելու դաշտերը, կայցելեն կիրակնօրեայ դպրոցը։ Եթէ կը կատարվեն այդ յոյսերն էլ, այն ժամանակ մենք էլ մեր ձեռներից եկած միջոցներով կաշխատենք կազմակերպել դպրոցը ոչ միայն աղայոց, այլ և ծնողաց համար։ Այն ժամանակ հեշտ կը լինի սրանցից պատրաստել լաւ ընտանիքի տէր մարդիկ և ադնիւ քաղաքացի և վերջապէս հեշտ կարելի է լրացնել ու կատարել դպրոցի խնդիրը։ Այն ժամանակը դպրոցը և ընտանիքը կը գործեն միասին ձեռ ձեռի տուած. ընտանիքը այն ժամանակ դպրոցի հետ կունենայ ամենամօտիկ յարաբերութիւն։ Այժմ շատ անգամ պատահում է, որ դպրոցը ստեղծում է, իսկ ընտանիքը քանդում է. դպրոցը աշխատում է առաջ գնալ, իսկ ընտանիքը խափան է լինում նրա ոյժերին։ Ընտանիքը, չնորհիւ իր տգիտութեանը, դպրոցի վրա շատ անգամ նայում է կասկածաւոր աչքով, չը հասկանալով, որ դպրոցն էլ աշխատում է հէնց նրա շահերի համար։ Մեզանում ծնողներից մի քանիսը ուղարկում են իրանց երեխայոց դպրոց, որ չարութիւն չանեն տանը. միւսները—որ իրանց երեխայքը մի փոքր «գրել ջնջել» իմանան. իսկ մի քանիսներն էլ ոչինչ չեն ցանկանում և չեն էլ սպասում դպրո-

ցից. բայց թէ իրանց որդիքը դպրոցում մի բան սովորում են թէ ոչ—նրանք երբէք չեն մտածում և մինչև անգամ մի առանձին նշանակութիւն էլ չեն տալիս այդ հարցին: Ուսուցիչը այդպիսով չարչարվում է ու տանջվում, առաւօտից մինչև երեկոյ աշխատում է ապականված օդի և թոզի մէջ, կարծելով, որ շատ հեռու է գնացել, բայց իսկապէս կրիայի քայլ էլ չէ արել: Ուրեմն պիտի աշխատենք դարձել դէպի կիրակնօրեայ դպրոցը և մեր արհեստաւոր աշակերտաց ծնողներին: Թող սրանք ստեղծողներ լինեն և ոչ դպրոց քանդողներ և այն ժամանակ ընտանիքը և դպրոցը նպաստած կը լինեն նոր սերնդի կրթութեան ու դաստիարակութեան գործին: Եթէ կարողացանք չարունակել այդ գործը մի քանի յաջող տարիներ այնպէս, ինչպէս մենք ենք ցանկանում, այն ժամանակ, կրկնում եմ, մեր առօրեայ դպրոցական պարապմունքը մեծ և զգալի օգուտներ տուած կը լինի: Այն ժամանակ համարձակ կարելի է ասել, որ դպրոցը կը լինի ամենաօգտաւէտ ազգային հաստատութիւններից մէկը և ծառայած կը լինի իր ամենաբարձր կոչմանը:

Ա. Գալստեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բաքու, 20 մարտի

Ձեր պատուական լրագրի № 54 ներքին լուրերի կարգում կարդացի ձեր թղթակցի հաղորդած լուրը՝ որպէս թէ տեղւոյս հասարակութիւնը անբաւական է իմ տեսչական պարտականութիւնից, պատճառելով՝ որպէս թէ ես առաւել հասարակական գործերով եմ զբաղված, քան թէ իմ տեսչութեան յանձնված ուսումնարանի գործերով:

Այս տեղեկութեան ընտրութիւնը ինձ համար այնքան անբացատրելի է, որքան անակնկալ ձեր նոր թղթակցի վստահութիւնը հասարակութեան անունով թարգման լինել լրագրութեան առաջ, մինչդեռ այդ հասարակութեան գործերին վերահասու և նրա կամաց ու տրամադրութեան յայտարար լինելու պարտաւորութիւն ստանձնող մարմինները անծանօթ են մնում ձեր թղթակցի ասած դժգոհութեան:

Իմ տեսչութեան յանձնված ուսումնարանի գործերը միշտ բաց են եղած ամենի առաջ, ինչպէս և գործաբաց են այդ ուսումնարանը խնամող վարչութեան և հոգաբարձութեան կանոնաւոր նիստերը: Ո՞ւր էին այն դժգոհները, որոնք պարտաւոր էին այդ գործերից մտնելով իրանց արդարացի բողոքը և դժգոհութիւնը յայտնել, քան թէ այդ գործերից դուրս անզօր տրտնջալ: Բարեբաղդաբար Բաքուի հասարակութիւնը, որ անմիջապէս գործ ունի ուսումնարանի հետ, ճանաչել է այդ գործերը և միշտ մեր ցաւին ցաւակից, ուրախութեան ուրախակից, և ամեն ժամանակ և ամեն դէպքում մեր գլխաւոր օգնոյն է եղած:

Կասկած չը կայ, որ ինչպէս ամեն տեղ, նմանապէս մեզանում կան անհատներ, որոնց կեանքը առաւել բամբասանքի, զրպարտութեան, նենգութեան բովանդակութիւն է, քան թէ օգտաւէտ աշխատութեան, խելացի դատողութեան և բարձր զգացմունքների ասպարէզ: Դրանք գործ չունեն իսկապէս ուսումնարանի վիճակի հետ: Բայց որովհետև նրանց սովորութիւնը մշտակայ զրպարտութեան նիւթ է պահանջում, վանողոյ ուսումնարանը իր ներողամտութեամբ և անպատասխան վիճակով դրանց նման մարդկանց անզգաստ կրքերի, անսանձ լեզուի և ինքնահաւան ամբարտաւանութեան զոհ է դառնում: Մենք դրանց հետ գործ չունենք, դրանք խաւարի ծնունդներ են, որոնք միշտ վախում են լոյսից: Բայց մենք հրաւիրում ենք նրանց, որոնց թանգ ու նուիրական են ուսումնարանի շահերը, բայց ունեն մի որ և իցէ պատճառ մեղանից դժգոհ լինելու, մտնել մեր ուսումնարանը և նրա վրա տեղեկութիւն ստանալ առաւել մերձաւոր աղբիւրներից՝ քան թէ խաւարի անկիւններում, կամ երևակայութեան սահմաններում որոնել այդ տեղեկութիւնը:

Գուցէ կան պատճառներ, որ հասարակութիւնը ինձանից անբաւական լինելու տեղիք ունի: Բայց ես ամենևին չեմ կարծում, որ հասարակութիւնը իսկապէս ինձանից անբաւական է նրա համար, որ ես հասարակաց գործերով առաւել եմ զբաղված, քան թէ իմ տեսչութեան յանձնված ուսումնարանի գործերով:

Ես չեմ կարծում մեր հասարակութեան մէջ այնքան տգիտութիւն, որ նա չը գնահատէր իմ գաղափարս ուսումնարանի նշանակութեան վրա և դժգոհ լինէր այն իսկ պատճառով, որ ես իմ պաշտօնի վրա վարձկանի կամ աստիճանաւորի աչքով նայելը իմ մարդկային արժանաւորութեան համար ստոր գործ եմ համարում: Եթէ ես հասարակաց ուրիշ գործերով զբաղվել եմ, իմ գաղափարով այդ «ուրիշ գործերը» այնքան սերտ կապակցութիւն ունեն իմ տեսչութեան յանձնված ուսումնարանի գործերի հետ, ինչպէս հոգին մարմնի հետ: Եթէ Մարդասիրական ընկերութեան ընթերցարանը պ. Ա. Գրիգորեանցին աջակցելով կամեցել եմ հոգևորը վիճակից ազատել—դա ուրիշ հասարակաց գործ չէ: Եթէ կիրակնօրեայ դասախօսութեան գաղափարին ծառայելով պաշտօնական կառավարութիւնը յանձն եմ առել,—դա այլ գործ չէ: Եթէ ուսումնարանիս բազմաթիւ աղքատ աշակերտների հանդերձի կամ դպրոցական առարկաների պակասը լրացնելու համար տեղիս առաւել կարողաւորներին դիմում եմ,—միթէ սա ուրիշ հասարակական գործ է: Եթէ ձեր թղթակիցը ինձ լաւ ճանաչում է, յոյս ունեմ որ նա կարողանալու չէ ասել, որ «իմ հասարակական ուրիշ գործերս» այս սահմանից դուրս եկած են: Այս ուրիշ գործերի համար ես չեմ կարծում, որ հասարակութեան կողմից դժգոհութիւն լինէր, որովհետև այս բոլոր ուրիշ գործերի մէջ նոյն իսկ հասարակութիւնն է, որ իր օգնութեամբ քաջալերում է իմ գործս և ես բոլորովին նրան եմ չնորհապարտ:

Եթէ ձեր պ. թղթակիցը գիտէ ուրիշ բան, որով հասարակութիւնը տեղի ունի ինձանից դժգոհ լինելու, առաջարկէ. ես կընդունեմ չնորհապարտութեամբ և կը տամ իմ տեղս առաւել արժանաւորին. ես հեռի եմ զբաղոցական գործի վրա նայել իմ կարծիքով ներկայ դէպքում փարիսեական նշանաբանով. Quod possum facio, faciant meliora potentes:

Իմ կարծիքով դպրոցի, ուսումնարանի համար պիտի աշխատել չէ թէ այնքան, որքան կարողանում ենք, այլ այնքան, որքան որ այդ գործի համար հարկաւոր է:

Բժ. Արամեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Վ. Ադուլիս, 16 մարտի

Վ. Ադուլիսից ձեր պատուական «Մշակի» 28 և 33 համարներում գրում են, որ ես հրաժարվում եմ իմ նուիրաւութիւնը տալ ուսումնարանին, բայց ոչ մի խօսք չեն ասում չարժաւորի պատճառների վրա:

Թոյլ տուէք ձեր լրագրի միջնորդութեամբ պարզել հարցի այդ կողմը, որ Վ. Ադուլեաց գրագրոցների համար մեծ կարևորութիւն ունի: Ուսումնարանը հիմնարկելիս աչքի առաջ ունէինք, որ այստեղից աւարտածը կը մտնէ միջնակարգ ուսումնարանի բարձր դասատները՝ այդ նպատակը արտայայտվեցաւ հաստատված և տպած կանոնադրութեան մէջ. վերջինիս այդ կանոնադրութիւնը և տեսէք թէ ինչ ընդարձակ նախագիծ էր նշանակված, որի իրագործման համար հարկաւոր էր մեծ նիւթական միջոցներ ի հարկէ:

Այդ նպատակն իրագործելու, ես իմ յօժար կամօք, առանց կողմնակի խնդրանաց, բացի հիմնադրական 300 ռուբլուց նուիրեցի 2,600 ռուբ., որի տոկոսով պէտք է 5 որդեղիր պահվէր երկսեռ ուսումնարաններում: Այսպիսով ես ութը տարի ամեն ճչտութեամբ 2,900 ռուբլի 8% վճարեցի, տարեկան 232 ռուբ., սպասելով, որ դպրոցը մօտենայ իր նախագծած նպատակին: Նորանից յետոյ համաձայն բարերարաց վճռին՝ նոյն գումարի համար վճարում էի 6%: Այդ ես շարունակվեց 7 տարի, բայց դպրոցը չէր կարող առաջ գնալ. դրա գլխաւոր պատճառներից մէկն այն էր, որ իմ և աղա Մկրտիչ Տէր-Մկրտչեանցի, որ 11 որդեգիր է պահում և մի քանի անձանց պահած մի քանի որդեգիրներովը, ուսումնարանը չէր կարող իր ընդարձակ նպատակին հասնել: Ուսումնարանը հասարակական հիմնարկութիւն է, կենսական պիտոյք է, բայց և նորա պահպանութեան ծանրութիւնը ևս պէտք է ընկնի հասարակութեան վրա. դրա ծախսն ևս պէտք է քաշէր հասարակութիւնը, նորա անդամների ըստ չափու կարողութեան տուած օգնութեամբ: Բայց այս դէպքումն ինչ ենք տեսնում. կան անձինք, որոնք ինձանից շատ և շատ հարուստ են, բայց դպրոցին տալիս են միայն հիմնադրական 300 ռուբլի տոկոսը: Ես քանիցս անգամ յայտնել էի, որ եթէ ինձանից հարուստները չեն օգնի, այն ժամանակ ուսումնարանը իր նպատակին չի կարողանալու հասնել, ուրեմն իմ նուիրած փողերը իրանց նպատակին ոչ թէ միայն չեն ծառայում, այլ միջոց են տալի նոյն հարուստներին իրանց որդոց և ազգականների համար նախակրթարան ունենալ: Այդ հարուստները իրանց զաւակների համար թոչակաղրամ վճարելիս անգամ մի քանի ռուբլու համար խօսում են և վիճում, մինչ ուրիշ տեղեր ուղարկելով չեն խնայում հարիւրներ:

Մի կողմից այդ անձինքները ուսումնարանին չեն օգնում, միւս կողմից իրանց երեխայոց շուտ հանելով ուսումնարանից և ուղարկելով ուրիշ տեղ՝ այսպիսով զրկում են սորան բարձր դասատներ ունենալուց և վերջապէս ուրիշի տուածի վրա մեծ մեծ խօսում և իշխանաբար ու կամայականութեամբ ուսումնարանը կառավարում և այսպիսով զրկվում ենք և այն յառաջդիմութիւնից, որ կարող էինք ունենալ: Այս հանգամանքները աչքի առաջ ունենալով, ես յայտնեցի, որ եթէ ինձանից հարուստները ըստ չափու կարողութեան կօգնեն, ուրեմն մեր նպատակը կարող է իրագործվել, այն ժամանակ ես կը չարունակեմ 2,900 ռ. տոկոսն անխափան վճարել: Եթէ ոչ ես մտադիր չեմ իմ թոյլ միջոցներով նպաստել հարուստների զաւակաց էժանագին ուսմանը: Ես էլ այդ հասարակութեան անդամներից մինն եմ, ուրեմն ես էլ նրանց նման կը վճարեմ իմ հիմնադրական 300 ռ. և ոչ այլ ինչ:

Թովմաս Ասլանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ահա մի չաթթ է արդէն որ Կովկասեան սարերի վրա եկած մեծ ձիւնների պատճառով Ռուսաստանի փոստը չէր ստացվում Թիֆլիսում: Վերջապէս այսօր փոստի մի մասը ստացվեցաւ:

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են մարտի 26-ից, որ չորս օր է արդէն որ այդտեղ անձրևներ են գալիս: Վերջը սկսեց ձիւն էլ գալ: Այդ անձրևները, աւելացնում է մեր թղթակիցը, անչուշտ մեծ օգուտ կը տան վարուցանքին և խոտերին:

—

ԹԻՖԼԻՍԻ օրիորդական գիմնազիայի հայ աշակերտուհիները խնդրում են մեզ յայտնել մեր լրագրի միջոցով իրանց չնորհակալութիւնը պ. պ. Աւետիք Տէր-Յակոբեանին և Թ. Ատովմանին, որոնցից ստացան՝ առաջինից մի օրինակ իր աշխատասիրած «Հայաստանի աշխարհագրութիւն» ձեռնարկը, իսկ երկրորդից երկու օրինակ իր թարգմանած Գր. Շմիդտի «Երեք զրոյցներ» գրքոյկի:

—

Մեզ գրում են Դիլիջանից որ Ղազախի անտառները շատ լաւ գրութեան մէջ են և անտառապետ պ. Վեղիրով շատ բարեխիղճ կերպով է վարում իր պաշտօնը: Ամիսը մի անգամ Վեղիրով իր ստորադրեալներով անպատճառ շրջում է իր իշխանութեանը յանձնված բոլոր անտառներում:

—

Մեզ գրում են ՄԵԾ-ԴԱՂԷԹ գիւղից որ այդ գիւղի հասարակութիւնը իր ծախու առած անտառից բերված գերանները հաւաքեց մի տեղ և միտք ունի այդ գերաններով շինական դատարան և ուսումնարան շինել: Նոյն հասարակութիւնը իւրաքանչիւր վարելահողերի բահրա ասված ցորենի մասը ուզում է հաւաքել վարողներից և միտք ունի այդ ցորենն էլ յատկացնել ուսումնարանի և դատարանի շինութեանը: Յանուն ուսումնարանի շինութեան ստորագրութիւն է բացված Մեծ-Դաղէթ գիւղում, որ մօտ 3,000 բնակիչ ունի, բայց գիւղի հայ քահանան համ ինքն հրաժարվել է մասնակցել այդ ստորագրութեանը, համ էլ համոզում է գիւղացիներին ուսումնարան չը կառուցանել: «Ի՞նչ օգուտ պէտք է տայ ձեզ ուսումնարանը, բացի վնասից» անդադար կրկնում է տէր հայրը իր ժողովրդին: Մինչև այժմ, եթէ Մեծ-Դաղէթ անապին գիւղում ուսումնարան չը կար, աւելացնում է մեր թղթակիցը, դրա պատճառը քահանան էր, որ ամեն մէջից էր գործ դնում որ ուսումնարան չաջողվի այդ գիւղում:

—

ԲԱԳՈՒԻՑ 24 մարտից մեզ գրում են: «Այսօր գտնվեցաւ ծովի ափում մի խեղդված մարդու մարմին: Նշաններից երևում է թէ մեռածը թուրք է եղել: Երեսը ճանաչել անհնարին է:»

—

Նոյն տեղից մեզ գրում են: «Ծովի ափից մինչև քաղաքի հրապարակը գեղեցիկ, պինդ սալայատակ է անցնում, որ գիշերով լուսաւորվում է բազմաթիւ լապտերներով, այն ինչ Բաքուի հայոց և պարսից թաղերը թողնվում են անխնամ, կեղտոտութեան և մթութեան մէջ»: Թղթակիցը զարմանում է Բաքուի քաղաքային վարչութեան ուշադրութիւնը քաղաքի հայոց և պարսից թաղերի կեղտոտութեան վրա, որից կարող են առաջանալ այլ և այլ հիւանդութիւններ:

—

Երկուշաբթի, ապրիլի 5-ից, կը սկսվեն հայոց մշտական խմբի ներկայացումները, որոնք տրվելու են մասամբ Ամարային թատրոնում և մասամբ Արծրունու թատրոնում: Չորեքշաբթի, ապրիլի 7-ին Արծրունու թատրոնում ի նպաստ տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեանի մշտական խումբը կը ներկայացնի «Օրիորդ Բերոյեան», կոմեդիա 3 արարուածով հեղ. Ա. Քիշմիշեանի և «Ժօզէֆ, Փարիզի չրջմոլիկը», կոմ. 2 արարուածով: Երկրորդ անտրակտի ժամանակ տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան կերգէ: Դերերը կը կատարեն օր. օր. Վիրգինիա և Երանուհի Կարագաշեաններ և Մարի-Նուարդ, տ. տ. Հրաչեայ և Փաշայեան-Տէր-Գրիգորեան, պ. պ. Մնակեան, Ադամեան, Աւալեան, Տէր-Դաւթեան, Օրդուբաղեան, Տէր-Գրիգորեան: Տեղերի գինը բենեֆիսային է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Վերջին տեղեկութիւններից երևում է, գրում է „Голосъ“ լրագիրը, որ աւստրօ-ունգարական կառավարութիւնը վճռել է Բոսնիայի և Հերցեգովինայի մէջ ամրոցներ կառուցանելով, ամրացնել այն կապը, որ պատերազմական կողմից միացնում է գրաւած նահանգները Աւստրօ-Ունգարիայի հետ: Լրագիրների տեղեկութիւնների համեմատ աւստրօ-ունգարական գլխաւոր շտաբի կառավարիչը արդէն մշակել է այդ ամրոցների նախագիծը և պատերազմական մինիստրութիւնը ամենակարճ ժամանակամիջոցից յետոյ աւստրիական պատգամաւորների ժողովից կրեդիտ կը պահանջէ այդ նախագիծը իրագործելու համար:

Գրաւված նահանգների ժամանակակից պատերազմական կազմակերպութիւնը, աւստրիական զինուորական իշխանութեան կարծիքով, մեծ պակասութիւններ ունի: Այդ պակասութիւնը կազմում է ամրոցների բացակայութիւնը: Այդ պակասութեան խոստովանելը քաղաքական տեսակէտից ապացուցանում է, որ աւստրիացիները այնպէս չեն վերաբերվում գրաւված նահանգներին, ինչպէս որոշել է Բերլինի դաշնագիրը: Մինչդեռ պատերազմական տեսակէտից, աւստրիացիք կատարելապէս իրաւացի են: Գրաւելով Բոսնիա և Հերցեգովինա, աւստրիացիք գտան այնտեղ փոքր ի շատէ ամրացրած մի քանի գիւղեր և քաղաքներ և մի շարք ամրացած դիրքեր, որոնց կառուցել էին Թիւրքերը դեռ Օմերփաշայի ժամանակ: Չին ամրոցների աւերման վրա ուշադրութիւն չը դարձնելով, աւստրիական պատերազմական մինիստրութիւնը պահպանեց ամրացած դիրքերը, որովհետև նրանք ծառայում էին երբև բնակարան ժանդարմների համար: Աւստրիացիները Լիմի գաւառում Պլեվլայի կողմը միայն մի ամրոց կառուցին:

1,115 քառակուսի մղոն տարածութիւն ունեցող երկիրը գրաւելու համար միայն 26,000 զօրք նշանակելով, պատերազմական մինիսարութիւնը ստիպված էր իր զօրքերը կենտրոնացնել այնպիսի տեղերում, որոնց տիրապետելը ստրատեգիական կողմից անպայման անհրաժեշտ էր, յուսալով, թէ գրաւող զօրքերի թոյլութիւնը կը փոխարինվի հաղորդակցութեան զարգաց-

մամբ, ժանդարմների նշանաւոր զօրաբաժնի կազմելով և այլն։ Վերջին ապստամբութիւնը ապացուցեց, որ այդ հաշիւը սխալ էր։ Բոսնիայի և Հերցեգովինայի ժամանակակից պատերազմական կազմակերպութիւնը բաւական այժ ունէր ապստամբութիւնը յայտնի սահմաններում պահելու համար, բայց անկարող էր հէնց սկզբից նրան ճնշել։ Ապստամբները կարողացան կազմակերպվել, դրաւեցին նշանաւոր դիրքեր և կանոնաւոր կռիւներ սկսեցին աւստրօ-ունգարական զօրքերի հետ։

Ի նկատի առնելով, որ ներկայ տարվայ անցքերը կարող են կրկնվել, աւստրօ-ունգարական կառավարութիւնը անհրաժեշտ է համարում պատերազմական նոր միջոցներ գործադրել նրանց առաջն առնելու համար, ուժեղացնելով գրաւված նահանգների պատերազմական կազմակերպութիւնը։ Այդ նպատակին կարելի է հասնել կամ մեծացնելով աւստրիական գրաւող զօրքերի թիւը, կամ ստրատեգիական նշանակութիւն ունեցող ամրոցներ կառուցանելով։ Զօրքերի թիւի շատացնելը մեծ քանակութեամբ զինուորներ կը խլէ այնպիսի տեղերից, որտեղ կարող է պատերազմ սկսվել, բացի այդ նրանց պահելը շատ թանգ կը նստի, որովհետև զօրքերի համար մթերքները պէտք է հասցնել պետութեան հեռաւոր նահանգներից։ Այդ պատճառով աւստրիական կառավարութիւնը վճռել է ամրոցներ կառուցանել։

Լրագիրները առաջ հաղորդեցին, որ այդ նպատակի համար կառավարութիւնը 50,000,000 գուլդէն կրեդիտ է պահանջելու։ Գումարի այդպիսի մեծութիւնը առիթ էր տալիս ենթադրելու, թէ աւստրիական կառավարութիւնը մտադիր է անզօր դարձնել թէ ներքին խռովութիւնները և ապստամբութիւնը և թէ արտաքին յարձակումը։ Բայց ինչպէս գործի էութիւնը, նոյնպէս և աւելի ուշ ստացված տեղեկութիւնները առիթ են տալիս հաւանականութիւն չը տալ վերջին ենթադրութեանը։ Զերնոգորիայի և Սերբիայի պատերազմական նշանակութիւնը համեմատաբար Աւստրօ-Ունգարիայի հետ այնքան անչնչին է, որ աւստրիական կառավարութիւնը հարկաւորութիւն չունի արհեստական ճանապարհով պաշտպանել իրան այդ պետութիւններից, մանաւանդ ներկայումս, երբ աւստրիական կառավարութիւնը միջոց չունի ամրացնել Տիրոլ և Գալիչինա, որ անպայման անհրաժեշտ է համարված։ Ինչ կը վերաբերի Թուրքիային, աւելի շուտ թուրքաց կառավարութեան համար անհրաժեշտ է հոգալ Նովոբազարի սանջակի ապահովութեան համար, քան թէ աւստրօ-ունգարական կառավարութիւնը Լիմի նահանգի ապահովութեան համար։

Ամրոցներ կառուցանելով այն դիրքերի վրա, որոնց վրա վերջին ապստամբութեան ժամանակ աւստրիական զօրքերը ստիպված էին յարձակում գործել, Աւստրօ-Ունգարիան հեշտութեամբ կը կարողանայ շարունակել իր գործը Բալկանեան թերակղզու վրա։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 17 մարտ 82

Օր մը չանցնիր որ առիթ չունենանք վերոսին ստուգելու թէ ստորութեան հոգին հայուն կենսական տարրերէն մին եղած է, և թէ նա ոչ միայն պարտաւորութիւն մը կը համարի օտարի առաջ գլուխ ծռելը, այլ նաև ազգօգուտ գործ մը կատարել կը կարծէ այդ ազգին հետ ալ բարեկամութիւն կապելով։

Քանի մը ժամանակ է տեղիս հայ լրագիրները, հայոց յունաց հետ կրօնական անխարութեան, կամ աւելի ճիշդ խօսելով՝ եկեղեցական ներդաշնակութեան պէտքը կը քարոզէին և մեծ ուրախութեամբ կը հրատարակէին որ և է առ երեսս և անչնչան բարեկամական ցոյցը որ կը տար յունաց եկեղեցական դասը դէպի մեզ։ Առանց այդ ձգտումներուն անհրաժեշտ պէտքը ըմբռնելու, մանաւանդ մերիններուն կողմէն, մենք անտարբեր կը մնայինք, վասն զի կանխապէս համոզված էինք թէ քանի մը եկեղեցականաց այդ ճիգերը ոչ օգուտ կարող էին բերել մեզ, ոչ ալ վնաս։

Բայց տեսէք ինչ հետևանք ունեցաւ հայուն այս ստրկահոգութիւնը, որ ի մէջ այլոց, իբր չափելի օրինակ մը մէջ կը բերենք։

Անցեալ օր Պէշիքթաշի թաղին մէջ մի յոյն բժիշկ բաշա կը մեռնի, որու անունը չեմ յիշեր, բայց փոյթ չէ. նա այնպիսի բաշաներէն էր որ պատմութիւնը կրնայ մոռանալ յիշատակելու առանց մեղանչելու։ Մի մանաւոր յոյն պարոն, ինքն իր կողմէն կերթայ հրաւիրել այնտեղի քարոզիչ հայ արքեպիսկոպոսն, որ դայ յուղարկաւորութեան հանդէսին ղեկուցաւորեալ մասնակցի։ Խորին եպիսկոպոս, անշուշտ կարծելով որ առիթն յարմար է կատարելու համար ինչ որ Քրիստոսէ ի վեր չէր կատարուած, այն է երկու ազգաց մէջ կրօնական անխարութեան հաստատութիւնը, կը վազէ քանի մը հայ եկեղեցականաց հետ ննջեցեալի տունը, ուր գտնուող յոյն եպիսկոպոսունք և քահանայք հաղիւ թէ կը բաւենն զայն և կը յայտարարեն թէ թաղման հանդէսը չեն կատարեր եթէ հայ քահանայք ղեկուցաւորեալ և դաւազանաւ մասնակցին այդ արարողութեան։ Մի և նոյն ատեն թողնելով հայ քարոզիչն որ մի քանի անձանց հետ ճառախօսէ կրօնական անխարութեան բարիքներուն վրայ, կառնեն ննջեցեալը և կը տանեն եկեղեցի։ Եռանդուն, բայց դիւրահաւան հայ արքեպիսկոպոսը կը պարտաւորի իր տունը դառնալ ինչպէս որ եկած էր, կուլ տալով հետը բերած «հոգոյն հանգուցելոյ»-ը։

Ինչ հարկ կայ, կը հարցնեմ, անդադար այսպիսի նախատինքներու ենթարկուիլ և այս այնպիսի ազգի մը կողմանէ, որու ոչ բարեկամութիւնը մեզ հարկաւոր է և ոչ ալ թշնամութիւնը աղետալի։ Մինչև երբ պէտք է մոռաւորութիւն ցոյց տանք այն ամէն օտարի հետ որ ոչ կրօնքով, ոչ ազգային բնաւորութեամբ և ոչ բարքով կարող են մեզ հետ համաձայնիլ, որք, ինչպէս յոյնը, իրենց սրտին մէջ դարաւոր և անհաշտ ատելութիւն մը կը կրեն այն ամենուն դէմ, որ ազգութեամբ իրենցմէ տարբեր է, և որք մանաւորապէս հայուն վրայ արհամարհանքով նայելու ծիծաղելի ժպիրութիւնն ունեցած են ի վաղուց։ Քաղաքական նկատմամբ ինչ գործ ունինք այդ ազգին հետ, որ 60 տարիէ ի վեր անկախութիւն վայելելով՝ աւելի իր պօռոտախօսութիւններովը ճանճրոյթ պատճառած է Եւրոպայ քան թէ բաղդատաբար մի յառաջադիմութիւն ըրած։ Ինչ ակնկալութիւն ունինք մի ազգէ որ ինքն ալ տակաւին ուրիշներէ պաշտպանուելու պէտք ունի և ամօթ, տարկուիլ չէ մեզ երթալ քծնիլ այնպիսի մի ազգի որու անցեալի փայլը հաղիւ իր այժմեան անշուքութիւնը կը պարտկէ։ Կը վախնանք, խեղճերս, որ չինկեանէներն անդամ վատ աչքով չի նային մեր վրա, մեզ հերձուածող, հերետիկոս չանուանեն։ Վիշտ կը զգանք երբ մեր եկեղեցւոյն ուղղափառութիւնը մէկը կասկածի ներքև կը դնէ և փոյթ չենք ըներ երբ ուսմանց, կրթութեան և այլ ազգային յատկութեանց նկատմամբ զմեզ ազգերուն յետին կը դասեն։ Ժամ է որ թողունք քիչ մ՚ալ ուրիշները որ մեր վրայ կրօնական տեսակէտով մտածեն ինչ որ կուզեն, մենք մեր գործը նայենք, մեր յառաջադիմութեանը հոգ տանենք, ներքին համերաշխութիւնը ամրապնդելու փոյթ ընենք։ Եւ երբ մեր պարտաւորութիւնը կատարելով կը ստանանք այնպիսի նիւթական և բարոյական վիճակ մը որ զոհացուցիչ է ամէն կերպով՝ այն ժամանակ ինքնաբերաբար օտարը կը գայ մեզ հետ համակրիլ, չէ թէ կրօնական տեսակէտով ուղղափառ ժողովուրդ մը, այդ մեզ համար նշանակութիւն չունի քանի որ այլակրօն ժողովուրդք միշտ պիտի գտնուին, այլ իբրև քաղաքականացեալ և մարդկութեան օգտակար ազգութիւն մը։ Այնպէս պէտք է ընենք որ ուրիշը չհամ ունենայ մեր բարեկամութենէն և զայն ստանալը իրեն պատիւ համարի։ Ակէ զուրս որ և է առնչութիւն անհիմն է, չինծու է։

Վերոյիշեալ միջադէպին գրեթէ նման մի ուրիշ եղելութիւն ևս տեղի ունեցաւ ութ օր վերջը։ Յոյները այստեղ մի գրականական հաստատութիւն ունին Syllogos անուն, որ բաւական յառաջադէմ է, չէ թէ ժողովրդեան ջանքովը, նա ալ մեզ պէս դրամ տալ չի սիրեր, այլ քանի մը հարուստներու առատաձեռնութեան շնորհիւ։ Syllogos-ի սրահին մէջ համախօսութիւններ (conférence) ալ կը լլան երբեմն։ Այս ուրբաթ երեկոյ ծանուցուեցաւ որ տիկին Դիւսապ—որ իր ամուսնական օտար անուան չը նայելով, մի հայ կին է—համախօսութիւն մը պիտի ընէ «հայոց մէջ եղած մտաւորական յառաջադիմութեան» վրայ։ Ցիշեալ գիտնական տիկինին յայտնած զաղափարներուն ոմանց վրայ չատ դիտողութիւններ ունինք ընելու երբ այն երեկոյ կարդացածը ապագրուի, շատ պակասաւոր տեղեր կային իր ճառախօսութեան մէջ, շատ միակողմանի հայեցուածքներ դիտցինք, բայց այն որ աւելի մեր աչքին զարկաւ այն դիշերը, այն էր թէ Սիլլօղոսի դիւանի կողմէն և հրապարակաւ պէտք եղած արժանավայել ընդունելութիւնը չեղաւ մի հայ տիկնոջ, որ վերջապէս իբրև հիւր կը ներկայանար այն տեղ և պատիւ կընէր այդ հաստատութեան։ Ո՛չ նախագահն և ոչ մի ուրիշ պաշտօնական անձ ներկայացուց զայն ունկնդրաց, ինչպէս սովորութիւն է ընել, և երբ տիկինը իր համախօսութիւնը վերջացուց անտեղի շռայլութեամբ շնորհակալիքներ յայտնելով այն շնորհին համար որ ըրին իրեն այն դիշեր, ոչ ոք ելաւ դիւանին կողմէն փոխադարձ շնորհակալութեան բառ մը արտասանելու։

Այս կոպիտ վարմունքը չի զարմացուց մեզ և կը սպասուէր իսկ, այնպէս որ մինչև անդամ անտեղի գտանք յարդելի տիկնոջ այս խօսելու ասնչանքը և ցաւ զգացինք տեսնելով որ նորա դասախօսութիւնը ծայրէ ի ծայր ուրիշ բան չէր, այլ պարզ մի խնկարկութիւն դէպի յունաց ազգը, որմէ խոյս տալը շատ դիւրին էր իրեն... բնաւ չի դասախօսելով։ Ինչ պէտք կար գալ անպատճառ համոզելու յոյներն որ հայոց ազգն այնքան յետադէմ չէ որքան անոնք կը կարծեն և թէ հայը կը ջանայ միշտ յունաց տուած մեծ օրինակին հետևիլ և այլն։

Իսկ հայոց այժմեան մտաւորական վիճակին վրայ խօսելով՝ ճառախօս տիկինը մերթ չափազանցօրէն բարձրացուց ոմանց բրածը և մերթ կողմնակալ գտնուեցաւ մի քանի անձանց արժանիքը գովաբանած ժամանակը, գլխաւորապէս մոռացաւ յիշատակել, և այդ շատ ցաւալի մի մոռացութիւն է, մեր ռուսերէնակ ազգայնոց ցոյց տուած եռանդն և յառաջադիմութիւնը և ակնարկութիւն մ՚անդամ չըրաւ այն ակնառու անձանց վրայ որք այդ կողմը կը գտնուին և որք ոչ միայն մեզի, այլ և ամէն ազգաց պատիւ կարող են բերել։

Ուրբաթ իրիկուան համախօսութենէն սա տպաւորութիւնը ունեցանք վերջապէս որ տիկին Սրբուհի Դիւսապ, որու գլխաւոր նպատակն էր կերևի, մեր վարկը բարձրացունել յոյներու առաջ և յոյն յարկի մը ներքև փառաւորել յունական անցեալը և ներկան, մեծ առիթ մը փախուց լուսնալու, վասն զի այդ ունկնդրաց առաջ ըրած ջատագովութեան պէտքը շատ զգալի չէր ըստ մեզ և ոչ ալ ազգի մը արժանապատուութեան վայելուչ։ Իր 27 վայրկեան տևողութեամբ բանախօսութեան մէջ քանիցս նշմարեցինք նուաստացուցիչ իրողութեանց յայտնութիւնը զոր, մանաւանդ յունաց առաջ, այսպէս հանդիսաւոր կերպով տարածանելու համար, յիրաւի պէտք է մի անձ հրապարակախօս լինելու անզսպելի փափաք մը ունենայ։ Մենք կը յուսանք որ զիտնական տիկինը կը վերապահէ իր մեծ դասախօսութիւնները աւելի յարմար ակումբներու, և կը մաղթենք որ ուրիշ անդամ աւելի քաղաքավար և աւելի արժանիք ճանաչող նախագահներու հանդիպի։

Մ. Վ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Petit Meridional» լրագիրը հաղորդում է, որ Ֆէրդինանդ Ազոս անունով արեղայի դէմ քրէական դատ է սկսված տասներեք տարեկանից փոքր երեխաների կուսութիւնը խախտելու համար։

—Անգլիական լրագիրները հաղորդում են։ Պ. Բրէդլօին յայտնեցին իր հակառակորդ Նիւդէսի փաստաբանները, որ նրանից պէտք է առնեն դատաստանական ահագին ծախսեր, որին նա դատապարտված է անկանոն կերպով պատգամաւորական տեղ բռնելու համար։ Նիւդէսի նպատակն է սարքել Բրէդլօին՝ իրան մանկացած յայտնել, որից յետոյ խակոյն կը զրկվի պատգամաւորական լիազօրութիւններից։

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, մարտի 20-ին, որ Գամբէտտա ընտրված է զինուորական յանձնաժողովի մէջ։

—Սպանիական լրագիրները հաղորդում են, որ Բարսէլօնում մեծ յուզմունք է տիրում գործաւորների մէջ։ Ամբողջ Կատալօնիայում պաշարման դրութիւն է յայտնված։

—Վիէննայի «Presse» լրագրին Սօֆիայից հեռագրում են, մարտի 15-ին, որ բուլգարական կառավարութեան փորձը՝ բանակցութիւններ սկսել Ցանկօվի հետ չաջողվեցաւ, որովհետև, նախ քան թէ խօսք բաց անելը զիջումների մասին ազատամիտների կողմից, նա պահանջեց սահմանադրութեան վերականգնումն։

—«Nord. Allgem. Zeitung.» լրագիրը հաստատում է այն լուրը, որ իշխան Բիսմարկ հաստատ կանգնած է իր նախկին դիտաւորութեան վրա ծխախոտի մենաւաճառութեան նախագիծը առաջարկել միացեալ խորհրդին և բէյխստագին։ Նա միայն մի քանի անչնչան փոփոխութիւններ կը մտցնի համաձայն այն նկատողութիւնների, որ արել է անտեսական խորհուրդը։

—Մարտ ամսվայ ընթացքում բէյխստագի երեք պատգամաւորները պ. պ. Մէյեր, Դօրն և Բանդէն դատի կանչվեցան (Լայպցիգում, Շտէտտինում և Հիրշբերգում), իշխան Բիսմարկին վիրաւորելու պատճառով։ Երեք պատգամաւորներն ևս արդարացան։

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ Գամբէտտա դիտաւորութիւն ունի այցելել մի քանի գաւառական քաղաքներ ծանօթացնելու այդ քաղաքների ժողովուրդներին այն վերանորոգութիւնների հետ, որ մտադիր էր իրագործել իր մինիստր-նախագահ եղած ժամանակ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հաշտարար դատաւոր à la américaine. Մեզ գրում են Ղ. քաղաքից հետևեալը։ «Մի զիւղացուց, երկու ամիս առաջ, անյայտ գողերը գողացել էին նրա միակ ձին։ Այս օրերս զիւղացին գալով գաղաք իր գործերի համար, փողոցում տեսնում ու ճանաչում է իր գողացված ձին, որի վերա նստած է լինում մի ուրիշ մարդ։ Իսկոյն բռնելով ձիու սանձից զիւղացին քաշում տանում է ձին գաւառապետի օգնականի մօտ, իսկ այս վերջինը ուղարկում է նրան գաւառական հաշտարար դատաւորի մօտ։ Դատարանում գործը երկար քննելուց յետոյ, դատաւորը առաջարկում է վիճող զիւղացիներին հետևեալ կերպով վերջացնել վէճը՝ դուրս գալ քաղաքից դուրս գտնվող դաշտը և բաց թողնել ձին. եթէ ձին ուղևորվեց այն զիւղի ճանապարհով, որտեղ կենում է առաջին զիւղացին, կը նշանակէ թէ ձին նրանն է, իսկ եթէ կենդանին ուղևորվեց միւս ճանապարհով, կը նշանակէ թէ ձին անկասկած պատկանում է երկրորդ զիւղացուն։ Զիւղացիները համաձայնվում են այդ օտարոտի առաջարկութեանը և նշանակված օրը դատաւորի քարտուղարը, երկու զիւղացիների և ձիու հետ, բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ դուրս գալով դաշտը, հրամայում է բաց թողնել ձին։ Բայց մի անակնկալ հանգամանք յանկարծ արգելք է լինում կատարել օտարոտի դատաստանական վճիռը. ազատված ձին, տեսնելով որ իրանից ոչ հեռու կանգնած է լինում մի մատակ ձի, անմիջապէս սիրահարվում է նրա վերա և ոչ այս ու ոչ այն զիւղի ճանապարհով է գնում, այլ նախադասում է մօտենալ մատակ ձիուն, որից այլ ևս չէ կամենում հեռանալ։ Դատաւորի քարտուղարը ստիպված է վերադառնալ քաղաք, գործը չը վճռած, և չատարում է պատմել դատաւորին իր տեսած ծիծաղելի տեսարանի մասին։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 մարտի։ Ուսումնարանական հիմնարկութիւնների սաների ծառայողական արտօնութիւնների մասին մասնաժողովի աշխատանքները յանձնված են պետական խորհրդի քննութեանը։ Սիբիրի լրագիրները հաղորդում են, որ Գալկին Վրցկու վերաքննութեան հետևանքն այն կը լինի, որ կը վերցվի Սիբիր բնակութեան համար աքսորելու պատիժը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱ

ՍՕԼՕԼԱԿՈՒՄ

Պատիւ ունեմ յայտնել Թիֆլիսի մեծապատիւ հասարակութեան, որ առաջիկայ Զատկի տօնի համար ընդունում եմ պատուէրներ պասքի, կուլիչի, պօլկի մազուրկայի, տօրտի և ամենայն տօնին յարմար բաների. վստահ լինելով իմ նոր բերել տված վարպետներիս հմտութեան վրա ամեն վստահութեամբ դիմում եմ մեծ. հասարակութեան որ չը զլանան դիմելու մեզ իրենց պատուէրով:

Մ. Հախնազարեանց

ՄՈՒՐԱԲԱ, շաքարի ձուներ, պաներ-չեստեր, խաւիար և այլն: Ծախվում են շատ էժան

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ

Նոյն տեղ ծախվում են. բազկաթոռ-մահճակալ 8 ր., ամբողջ **ՀԱԳՈՒՍՏ** 12 ր., չը թրջող վերարկուներ 6—18 ր. և մեծ քանակութեամբ **ՐԻՎՕԼՎԵՐՆԵՐ**, դանակներ և այլն:

2—10

ՎԻԷՆՆԱՅԻ ԱԹՈՌՆԵՐ

36 ՐՈՒԲԼ

Եփ. Ծատուրեանցի դէպոյում

9—20

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԲԱՖՖԻ

ԴԱՒԻԹ ԲԷԿԻ

III ԳԻՐՔԸ

Բաղկացած է 563 երեսներից

ԳԻՆՆ Է 2 ՐՈՒԲԼ

Վէպի այս հատորի մենավաճառութիւնը պատկանում է բացառապէս Թիֆլիսի «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻՆ»: Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով.

„ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ“ (на Головинскомъ проспектѣ въ д. Мириманова, №№ 3 и 4).

ВЪ ТИФЛИСѢ

4—10

Պատիւ ունեմ յայտնել որ իմ նոր բացած ՖԱԲՐԻԿԱՑՈՒՄ լաւ ծխախոտի սիրողները և գործածողները կը գտնեն

ԸՆՏԻՐ ԾԽԱԽՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

Մաքուր Թիւրքայ, ամենալաւ տեսակների ծխախոտից, առանց որ և է խառնուրդի: Ես երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծխախոտը կարող է բաւականացնել ամենաընտիր ճաշակին, ծխախոտի գինը, ֆունտը 3 ռուբլուց մինչև 10 ռուբլի, իսկ պապիրոսների 100 հատը սկսած 1 ռուբլուց, մինչև 3 ռուբլի:

Գործարանս գտնվում է 3-որդ բաժնում Հեռագրական կայարանի մօտ, իսկ մագազինս Արծրունու գալերէում, Դվորցովի փողոցի վրա, № 3.

Պարտք եմ համարում այն էլ աւելացնել որ իմ ֆաբրիկայի արդիւնաբերութիւնները կը ծախվեն միմիայն իմ մագազինում:

Գործարանատէր ՇԱՀԻՆԵԱՆՑ

15—25

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօլովինսկի պրօսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից:

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. դիւժինը, ԾԻԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ 50 կ., ՇՂԹԱՆԵՐ (նոր ոսկուց) ժամացոյցի համար 50 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ռ., ծըծիչներ 1 ռ., հայելիներ 35 կ., վարսիքներ 4 ռ., պիջակներ 6 ռ., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ռ., գլխարկներ 1 ռ., չը թրջվող վերարկուներ 6 ռ., շչէօտկա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ռ. 50 կ. դիւժինը, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ տրիկօ, ԱԼԲՈՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էժան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՅՈՒ:

7—50

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Արծրունու գալլերէում, № 144 ԾԱԽՎՈՒՄ Է Վերված գները

Տօնական Փարիզեան ամեն տեսակ ապրանքներ, հագուստներ և շրջազգեստներ

11—60

Ա. Ս. ԾՈՒՐԻՆՕՎԻ և ընկերութեան դեղական պահեստը պատիւ ունի յայտնել, որ այսուհետև առևտուրը կը կատարվի հետևեալ ֆիրմայով. ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ («КАВКАЗСКОЕ ТОВАРИЩЕСТВО ТОРГОВЛИ АПТЕКАРСКИМИ ТОВАРАМИ“), որի կանոնագրութիւնը ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված է ներկայ 1882 թ. յունվարի 29-ին: Ընկերութեան պահեստը գտնվում է Խիտարովի տանը, թանգարանի դէմ:

7—7 (եր. և ուր.)

ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅՆ

Հայոց Վրաստանի և Իմերէթի ծանուցանէ, թէ նրա ատենումը նշանակած է ամուրդ 5-ին ապրիլի ներկայ տարվայ և կրկնամուրդ 6-ին նոյն ամսի, կապալաւ տարուեկեղեցական դիւղերը, որոնք գտնվում են Ախալքալաքի գաւառում Թիֆլիսի նահանգի: Պայմանները յանկացողք կարող են տեսնել կոնսիստորիայի դիւանատանը ամեն օր, բացի տօներից, առաւօտեան 9-ից մինչև 2 ժամն:

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆՈՒՄ

Պարսկական պալատական արտիստ

ՐՕԲԵՐՏ ԼԵՆՑ

պատիւ կունենայ Զատկից յետոյ ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ ըսկված մարտի 28-ից մինչև ապրիլի 4-ը տալ ամենայն օր ԿԱԽԱՐԴԱԿԱՆ և ֆիզիկական մեծ ներկայացումներ բոլորովին ՆՈՐ ՊՐՕԳՐԱՄՈՎ:

Պ. ՐՕԲԵՐՏ ԼԵՆՑ, վերջին երկու շաբաթների ընթացքում ներկայացումներ չը տալով, նոր ՍՏԱՑՎԱԾ մի քանի ԳՈՐԾԻՔՆԵՐԻ օգնութեամբ պատրաստեց ԲԱԶՄԱԹԻՒ ՆՈՐ ՓՈՐՁԵՐ, որոնք Ռուսաստանի մէջ ոչըքից չեն ցոյց տուած և որոնք ներկայացումն ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՄԵԾ ԱԶՈՂՈՒԹԻՒՆ ունեն:

Ներկայացման սկիզբն է երեկոյեան 8 ժամին:

Ներկայացման սկզբին և անտրակտների ժամանակ կածէ զինուորական ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ պ. Պարիսէկի առաջնորդութեամբ:

ՏՈՄՍԱԿՆԵՐԸ և մանրամասն պրոգրամները կարելի է ստանալ ԹԱՏՐՕՆԻ ԿԱՍՍԱՅՈՒՄ ամենայն օր առաւօտեան 10 ժամից:

Ներկայացման վերջը կը տրվի ՍՊԱՆԻԱԿԱՆ ԻՆԿՎԻԶԻՏԻԱՅԻ ԴԱՏԱՐԱՆԸ, կամ պատժի յանկարծակի փոփոխումն: Այդ փորձը կը կատարվի Թիֆլիսում դեռ չը տեսնված գործիքի միջոցով, որ անուանվում է ԻՆԿՎԻԶԻՏԻԱԿԱՆ ԶՈՒԹԱԿ կամ ՍՊԱՆԻԱԿԱՆ ԿԱԽԱՂԱՆ:

2—2

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ռ., չամադաններ 250—25 ռ., սակվոյաժներ 1. 30—12 ռ., սուենդուկներ ճանապարհի 6—35 ռ., մարտաններ (погребцы) 6—25 ռ., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնների պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամօրնի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու լուլանի 6—32 ռ., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ռ., պատրոնները. (գուլաններ) ըէվոլվէրի, սիգար Ռէնդարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կոֆէ էլինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգու 40—1 ռ. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ռ., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարէջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուժինը. գրչակոթներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ռ., դանակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօրմիս կարելու մաշինայ. Անգլիական ուլթուներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրամամալ կարօրկէն 18 կ., վաքս Ֆրանսիայի ծակոյ, թուղթ փոշտի, կանվերաներ, սուրգուչ, մատիա, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեսախատակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիէներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չուսիչէք 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալոսիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շերմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусь) ֆելչատկէք մարդկերանց և կանանց, պորտմոնեներ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր զոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կաոր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

21—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 1 Апрѣля 1882 года. Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Мелик. ул., каз. д.